

ՀՈՒԼԻՍ 2022

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	6
1.3. Ջրահեռացման համակարգ	6
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	7
1.5. Էներգահամակարգ	8
1.6. Մեքենա-մեխանիզմներ	8
2. Առևտրային տնօրինություն	10
2.1. Բաժանորդների տվյալներ	11
2.2. Հասույթ	11
2.3. Գանձում	12
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	13
2.5. Ջրաչափեր	14
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	15
3. Տեխնիկական տնօրինություն	16
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	20
3.4. Ջրատար համակարգի բարելավում	21
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	24
3.6. 1-85 թեժ գիծ	25
4. Լրատվական ծառայություն	26
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	29
5.1. Դասընթացներ/սեմինարներ	30
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	31
5.3. Համագործակցություն ՀՀ ԱԲ նախարարության, մարզպետարանների, ՄԻՄ-երի և այլ գերատեսչությունների հետ..	32
5.4. Քլորի տարողությունների ճնշափորձարկում, վկայագրման և ներկման աշխատանքներ	32
5.5. Անհատական պաշտպանության և կոլեկտիվ պաշտպանության միջոցների տրամադրում	32
6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	33
6.1. Համակարգչային ցանց	34
6.2. Ինտերակտիվ համակարգ	34

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Վայոց Ձորի մարզ

● «Ջերմուկ» տեղամասի աշխատակիցների կողմից Մյասնիկյան փողոցը սնող d=100մմ մետաղական ջրագիծը, որը կոռոզիայի հետևանքով քայքայվել էր և անհնարին էր դարձել վերջինիս հետագա շահագործումը, փոխարինվել է d=110մմ L=310մետր պոլիէթիլենային խողովակներով: Իրականացված աշխատանքների արդյունքում բարելավվել է Մյասնիկյան փողոցի ջրամատակարարումը և ջրի որակը:



Հուլիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2229
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	59650
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	56486
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	15968
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	6
Շահագործումից հանված ջրագիծ	մ	3479
Կառուցված ջրագիծ	մ	5775.4
Կառուցված կոյուղագիծ	մ	577
Վերացված գաղտնի վթարներ	հատ	26
Փոխարինված փական	հատ	87
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	446
Մաքրված դիտահոր	հատ	0
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	16.1
<i>Վերացված վթարներ</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Ջրամատակարարման ցանցում	հատ	1273
Ջրահեռացման ցանցում	հատ	2206
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	426

Հուլիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	832	988	662

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հուլիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	209	8	3	0	2	0	0	0	0	222
Փոխարինված	328	28	2	5	0	2	0	0	1	366
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	225	9	7	2	2	5	0	1	0	251
Ընդամենը	762	45	12	7	4	7	0	1	1	839

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 839 ջրաչափ: Կատարված աշխատանքների 91 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՅՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հուլիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1275	304	54
2	Սաշտոց	1790	240	36
3	Շահումյան	1445	171	20
4	Զեյթուն	460	234	0
5	Շիրակ	1840	537	31
6	Արթիկ	0	96	66
7	Ապարան	0	30	0
8	Ալավերդի	2230	19	12
9	Աշոցք	70	3	0
10	Բերդ	0	12	0
11	Իջևան	1450	51	0
12	Լոռի	3590	233	0
13	Նոյեմբերյան	170	16	12
14	Սպիտակ	250	22	0
15	Ստեփանավան	1755	32	22
16	Թալին	0	18	0
17	Տաշիր	590	17	0
18	Էջմիածին	0	120	4
19	Չարենցավան	880	107	1.5
20	Արովյան	3480	75	0
21	Հրազդան	3820	152	0
22	Աշտարակ	2840	14	4
23	Կենտրոն	390	242	18
24	Հյուսիս	0	184	0
25	Հարավ	0	316	8
26	Էրեբունի	0	145	0
27	Արմավիր	0	110	6
28	Արտաշատ	0	99	11
29	Էջմիածին	0	92	4
30	Աշտարակ	0	41	24
31	Արարատ	0	90	0
32	Մասիս	0	39	0

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի ըվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
33	Գավառ	1170	27	0
34	Սևան	580	83	63
35	Մարտունի	0	22	0
36	Վարդենիս	190	7	0
37	Ճամբարակ	0	11	0
38	Դիլիջան	0	43	20
39	Վայք	0	12	0
40	Եղեգնաձոր	85	11	0
41	Ջերմուկ	0	34	0
42	Սիսիան	0	52	0
43	Գորիս	0	43	4
44	Կապան	0	74	3
45	Մեղրի	0	23	6
	Ընդամենը	30350	4303	429.5

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ.սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Գավառի կեղտաջրերի մաքրման կայանի օդամուղի ռոտորը կոտրվել էր, իսկ օդի մղման ռետինե խողովակը շարքից դուրս էր եկել: Արդյունքում օդամուղի ռոտորը և ռետինե խողովակը փոխարինվեցին նորով և այժմ օդամուղը աշխատում է բնականոն ընթացքով: Մանր մասնիկների մամլիչը խցանվել էր, որը ապամոնտաժվեց և մաքրվեց: Այժմ սարքավորումները աշխատում են բնականոն ընթացքով:

- Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանի պոմպերը դադարել էին աշխատել: Զննության արդյունքում պարզ դարձավ, որ մակարդակի լողանային անջատիչը շարքից դուրս էր եկել, որն էլ փոխարինվեց նորով և այժմ պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

- Մարտունիի կեղտաջրերի մաքրման կայանի օդամուղի ռոտորի ածխե թիթեղները մաշվել էին և այդ պատճառով օդ չէր մղվում դեպի սարքավորումներ: Արդյունքում դրանք փոխարինվեցին նորով և այժմ օդամուղը աշխատում է բնականոն ընթացքով: Կարգաբերվեցին նաև մանր ճաղավանդակի քերիչ սանրերը, որոնք աշխատանքի ընթացքում խախտվել էին իրենց տեղից:

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանի մանր մասնիկների ճաղավանդակի քերիչ սանրի ատաճները կոտրվել էին, որի արդյունքում հավաքված մասնիկները չէին մաքրվում ցանցից: Վերանորոգվեցին սանրի ատաճները և այժմ սարքավորումները աշխատում են անխափան:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	57,440	21.6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	79,825	28.8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	169,040	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	126,669	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	105,171	9.9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	18,490	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	7,794	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,700	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	18,900	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	4,667	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի գնում և կարգավորում	115
Էլեկտրական սարքերի գնում և կարգավորում	12
Պոմպի տեղադրում	1
Այց	3
Պոմպի ապամոնտաժում	1

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ



Հուլիս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հուլիս ամսվա ընթացքում նորոգվել է թվով 1 մեքենայի շարժիչ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 8 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ձուլանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 9 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակուողի առանցքակալներ, հարվածամեղմիչի զապանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատաճսանիճներ, առանցքակալներ, կիսատնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 9 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Փոխարինվել են թվով 67 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, գտիչներ, արգելակման հեղուկ և քսայուղեր:

Թվով 21 անվադող նորոգվել է, փոխարինվել և հավասարակշռվել է:

Թվով 8 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 7 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեններ, վառոցքի բանալիներ:

Թվով 2 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 7 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 5 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 5 մեքենայի վրա իրականացվել են գներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Նորոգվել է թվով 1 մեքենայի փոխանցման տուփը, փոխարինվել է ատաճսանիճները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Փոխարինվել են թվով 2 մեքենայի ղեկային մեխանիզմները, ձգաձողերը և խաշուկները, իրականացվել է դրանց կարգավորում:

Հիդրավլիկ համակարգի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են խցուկներ, բարձր ճնշման մոխիչներ, ռետինե խողովակներ:

Եռակցման աշխատանքներ են իրականացվել թվով 7 մեքենա-մեխանիզմի վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.08.2022թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 583,583 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2022թ. հուլիս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	673,593	557,224	82,7
	Իրավաբանական անձ	30,848	26,359	85,4

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	735,403	599,780	80,6
	Իրավաբանական անձ	36,114	26,383	73,1

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 415 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հուլիս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4247 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 07.2022
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2044	1659	325	4028
	Իրավաբանական անձ	104	100	15	219
	Ընդամենը	2148	1759	340	4247

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հուլիս ամսին փոխարինված 4247 ջրաչափերի մոտ 49 %-ը (կամ 2099 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 251,189 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2022թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Հուլիս ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,383 մլն. դրամ (86 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում նախկինում կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում,

ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը հաշվետու ամսին գերծ է փասցել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Հուլիս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 300 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 32.7 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.08.2022թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հատույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	10,026	2,966
Բնակիչ-բաժանորդներ	7,166	1,937
Իրավաբանական անձեր	2,860	1,029

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 338.6 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2022 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.08.2022թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	703,543	598,185	85.02	35,016	26,367	75.30
	Առանց ջրաչափի	31,860	1,595	5.01	1,098	16	1.46

Տվյալների բազայում 01.08.2022թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	875,081	399,388	45.64	38,819	11,353	29.25

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 5586 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 819 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2398	1969	81.9
գ.Պոռչյան	1631	1105	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5934	1883	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Միսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 11867, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 11972, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1952, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2482, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1658, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2672 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4617 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	1254	586,266	107,816,697

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի հուլիս ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.6%, ինչը 0.1% ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 52ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2022թ-ի հունիս ամսին, 2021 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 109 լվ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 807 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 21241 ԿՎտ.ժ (4.13 %) այն դեպքում, երբ նորակառույց շենքերի տասը պամպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 10 պամպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 11090 կՎտ.ժ: Իսկ առանց այս պամպակայանների էլ. էներգիայի ծախսի, այն կնվազեր 32331 ԿՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ուսումնասիրված հասցեներ

Հաշվետու ժամանակահատվածում 165 հասցեներում կատարվել է էլ. հաշվիչի ընթերցման, ցուցմունքների գույքագրման և 12 պամպակայանների գնման աշխատանքներ և ՀԷՑ ՓԲԸ-ի հետ փաստաթղթաշրջանառության կազմակերպում:

- Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 1040 կՎտ.ժամ-3.1%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 38 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 24 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:


Թվով 387 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 320 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՋ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 3 հասցեում հայտնաբերվել են ջրագծի վթարներ:

Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում երկու հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով.

- Կիևյան 2/4 (Ar-102)
- Թբիլիսյան 9 (Ar-93)
- Գեղասարդի 5 (Abo-5)
- Մանթաշյան 28 (She-74)
- Ահարոնյան 5 (Qz-6)
- Սվաճյան 20 (Sh-2)
- Խչատրյան 1 (Ar-134)
- Քուչակի 48 (Hy-18)
- Սայաթ-Նովա 21 (Ke-27)
- Նարեկացի 38 (Hy-25)
- Գ. Նժդեհի 32/1 (She-98)
- Քաղսի պ/կ (Hra-5)

Տեղադրված գումարային 142 ինվերտորային պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 3,823 կՎտ.ժ կամ 1,42%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 42 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● 2022թ. հուլիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 993 604 ԿՎտ/ժամ (24,83%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 44 753 ԿՎտ.ժ/ամիս կամ 1,54%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 1 219 782 ԿՎտ.ժ կամ 14,88 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են հուլիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Գյուղերի և քաղաքների ամբողջական տվյալների բազաների ստեղծում, թարմացում և կապվող ջրատար համակարգերի թարմացում, միավորում	Գյուղեր և քաղաքներ	52
Թարմացված ջրագծերի տեղեկատվության համալրում	մարզեր	2
Էջմիածին ջրամատակարարման ներքին ցանցի տվյալների մուտքագրում	քաղաք	1
Լուռու մարզի Դարպաս գյուղի միևնույն տրամագծով մասնատված ջրագծերի միավորում	մարզ	1
Ստեփանավան քաղաքի Միլինո, Սայաթ-Նովա և հարակից փողոցների վերակառուցված ջրագծերի մուտքագրում ԱՏ համակարգ	քաղաք	1
ԱՏ համակարգում համայնքների առկա ջրամատակարարման տեսակների դասակարգում	դասակարգ	5
Կապտաժների կորդինատային տվյալների մուտքագրում ԱՏ համակարգ	կապտաժ	4
Երևան քաղաքում առկա պոմպերի տեղադիրքերի, քանակի, տեսակի ճշգրտում	քաղաք	1
Երևան քաղաքի Արարիկի համայնքի ջրի բաշխիչ համակարգերի հիդրավլիկ մոդելավորման համար տվյալների ճշտում	համայնք	1
Երևանի և մարզերի տվյալներ բազաների կառուցվածքային համապատասխանություն, ըստ դոմեյնի դասակարգում	բազա	2
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ –ի կողմից Վարձակալությամբ զբաղեցրած տարածքների թվայնացում՝ վկայականների հիման վրա	հատ	113
ՃԿՓ-ի տվյալների բազաների ճշգրտում և լրացում	բազա	1
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	282
Քաղաք Մասիսի, ք. Ճամբարակի, ք. Թումանյանի կոյուղագծերի թվայնացում	կմ	47
Երևան քաղաքի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր տարածքով անցնող կոյուղագծի վերակառուցման տվյալների մուտքագրում ԱՏ համակարգ	մուտքագրում	1
Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2378
Մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	8351
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	24
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	254
Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1771
Մարզային կոյուղու երկարությունը	կմ	1704

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հուլիս ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

Արգնի 2 ջրատար

Ջրատարի վրա Կորեայի ձոր թաղամասի հատվածում կրկին առաջացել էր վթար՝ $Q=100$ լ/վ ծավալով: Կազմակերպվել է ջրատարի կանգառ, որի ընթացքում վերոնշյալ հատվածը ջրազրկվել է, իսկ վթարը վերացնելուց հետո ջրատարը բերվել է բնականոն աշխատանքի:



Արտաշավան-Մաղմուսական ջրատար

Ջրատարի Արտաշավանի կապտածների շրջայցի ընթացքում պարզվել է, որ կապտածներում գտնվող որոշ խողովակներ դուրս էին եկել իրենց տեղից: Կատարված համապատասխան աշխատանքներից հետո ջրատարում ջրաքանակն ավելացել է $Q=10$ լ/վ-ով:

Գառնի-Արտաշատ ջրատար

Ջրատարի շրջայցի ընթացքում հայտնաբերվել են 2 անհայտ միացումներ, որոնք ապամոնտաժվել են Արտաշատ ՇՏ-ի կողմից:



Գառնի-Երևան ջրատար


Ջրատարի կապտածներում ուսումնասիրությունների ժամանակ պարզվել է, որ ջրատարի վրա գտնվող ՀԷԿ-ի բարձր ճնշման պատճառով ունենում ենք ջրի արտահոսք:

Ճնշումը նվազեցնելու հետո ջրատարում ջրաքանակն ավելացվել է $Q \approx 30$ լ/վ-ով: Ինչպես նաև հայտնաբերվել է խցանում, որը հանդիսանում էր թիվ 1 կապտածի արտահոսքի պատճառը: Խցանումը խողովակի միջից հեռացնելուց հետո թիվ 1 կապտածի ջուրն առնվազն $Q=35$ լ/վ-ով ուղղվել է Երևան:


Հուլիս ամսվա ընթացքում կատարվել են նաև շրջայցեր ջրատարներ, ջրաքանակների չափումներ և ջրաքանակի բաշխման աշխատանքներ:

Քաղաք Գյումրի

● Գյումրի Կիրովականյան փողոցում, որտեղ սուրվենցիոն ծրագրով իրականացվում է փողոցաշինական ծրագիր, Շիրակ տեղամասի աշխատակիցների հետ ուսումնասիրվել է փողոցում առկա հին ջրամատակարարման ցանցը, որի մեջ առկա էր որոշակի ջրաքանակ: Փողոցը հիմնանորոգման փուլում է, ուստի մեր կողմից սնուցման կետի հայտնաբերումից հետո (հին կորած փականային դիտահոր էր), տեղամասն այն խցափակել է: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է D=100մմ, L=286մ պողպատե և D=100մմ, L=518մ թուջե ջրագծեր: Տնտեսվել է Q = 2-3լ/վ ջրաքանակ:




● Գյումրիի Պարոնյան փողոցում, որտեղ սուրվենցիոն ծրագրով իրականացվում է փողոցաշինական ծրագիր, «Շիրակ» տեղամասի աշխատակիցների կողմից ուսումնասիրվել է փողոցում առկա հին ջրամատակարարման ցանցը, որը վթարվել էր շինաշխատանքների ընթացքում: Քանի որ փողոցը հիմնանորոգման փուլում է, ուստի հին ջրամատակարարման ցանցում անհրաժեշտ էր վերացնել ջրի առկայությունը: Տեղամասի կողմից այն խցափակվել է միացման կետում: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է D=150մմ L=678մ պողպատե ջրագիծ: Տնտեսվել է Q=0,5-1լ/վ ջրաքանակ:





Քաղաք Երևան

● «Մաշտոց» տեղամասի աշխատակիցների հետ կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Արզումանյան 16/1 շենքի D = 50մմ պողպատե մուտքագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q=7լ/վ ջրաքանակ:




● «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է վթար Արզնի 1 - Լամպերի ՕԿՁ ջրատարի վրա (D = 600մմ): Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q = 15 լ/վ:

● «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների հետ կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է հին գաղտնի վթար Նոր Նորք 8-րդ զանգված Մինսկի 38 շենքի՝ $D=100$ մմ պողպատե մուտքագծի վրա: Վթարը վերացվել է փոխարինման եղանակով տնտեսելով $Q=5$ լ/վ ջրաքանակ:



● «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների հետ կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է հին գաղտնի վթար Նոր Նորք 9-րդ զանգված Վիլյուսի 33 շենքի մոտով անցնող $D=150$ մմ պողպատե ջրագծի վրա: Ներսրսկման եղանակով փոխարինվել է ջրագծի $L=50$ մ հատվածը $D=63$ մմ ՊԷ ջրագծով: Տնտեսվել է $Q=2$ լ/վ ջրաքանակ:

● «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են 2 գաղտնի վթար Նոր Նորք 3-րդ զանգված Գյուրջյան փողոցով անցնող $D=100$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=6$ լ/վ ջրաքանակ:



● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ տեսախցիկով կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում խցափակվել է Գ. Նժդեհի փողոցով անցնող շահագործումից հանված $D=250$ մմ թուջե ջրագիծը: Տնտեսվել է $Q=1$ լ/վ ջրաքանակ:

● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում Արարատյան 62/2 և 62/1 շենքերին սնող պոմպի ելքի՝ $D = 50$ մմ պողպատե ջրագծի վրա հայտնաբերվել է վթար: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 3.5$ լ/վ ջրաքանակ, և վերականգնվել է պոմպի բնականոն աշխատանքը:



Քաղաք Մեղրի



● «Մեղրի» ՇՏ-ի հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Զվարի ՄԿ-ից մինչև Մեղրիի ՕԿՁ հայտնաբերվել են անհայտ միացումներ, ջրատարի վրա իրականացված անցքեր ու վթարներ: Վերացնելուց հետո տնտեսվել է մոտ $Q=12$ լ/վ ջրաքանակ:



3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● **Քաղաք Աշտարակ, «Արտակ»**

քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով փոխարինվել է փասսված քլորաջրի խողովակը 40մ:



● **Քաղաք Եղեգնաձոր «Մառնաղբյուր»** քլորակայանում հեղուկ քլորի համակարգի խափանված վակուում կարգավորիչը փոխարինվել է վերանորոգված վակուում կարգավորիչով, որպեսզի վերջինս ապահովի հեղուկ քլորի սարքավորումների անխափան աշխատանքը:

● **Քաղաք Գավառ** Մարուխան քլորակայանում շարքից դուրս եկած հիպոքլորիդի համակարգի ցիրկուլացիոն պոմպը փոխարինվել է նոր ցիրկուլացիոն պոմպով՝ հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● **Քաղաք Երևան Ավան Բարաջանյան 3/1-ում** վերանորոգվել է վակուում կարգավորիչ պահեստային նպատակով:


● **Քաղաք Եղեգնաձոր «Քառասուն աղբյուր»** քլորակայանում հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած պոմպը և ինժեկտոր մտնող փասսված դետալը փոխարինվել են նորով՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 48239 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 11765 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 9184 զանգ (78.1%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2581 զանգ (21.9%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 36474 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 25932 զանգ (71.1%), իսկ մարզերինը՝ 10542 զանգ (28.9%):
- 2021թ. հուլիսի համեմատ՝ 2022թ. հուլիս ամսին 0,38 %-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը ավելացել է 14,36 %-ով:
- 2021թ. հուլիսի համեմատ՝ 2022թ. հուլիս ամսին 263%-ով ավելացել է հայտարարությունների լուսժամ ավտոմատ ծառայության միջոցով, 103%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը և 14 %-ով՝ 5 բուսեից ավել զանգերի քանակը:
- 2021թ. հուլիսի համեմատ՝ 2022թ. հուլիս ամսին 19.31%-ով ավելացել է ջրամատակարարման բողոքները՝ կապված վթարավերականգնողական աշխատանքներով:

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր



	Ստորաբաժանում	2021 հուլիս	2022 հուլիս	
Առևտրային	Ընդամենը	11810	11765	-0.38%
	Երևան	9328	9184	-1.54%
	Մարզեր	2482	2581	3.99%
Շահագործում	Շահագործում	31895	36474	14.36%
	Հարավ	12443	12482	0.31%
	Շենգավիթ	1679	1385	-17.51%
	Կենտրոն	2585	2249	-13.00%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	2095	3001	43.25%
	Էրեբունի	2164	1664	-23.11%
	Պոմպեր	508	903	77.76%
	Մարզեր	3412	3280	-3.87%
	այդ թվում կոյուղու վթար	47	83	76.60%
	այդ թվում դիտահորի խցանում	2431	2291	-5.76%
	Հյուսիս	19452	23992	23.34%
	Արաբկիր	2700	6148	127.70%
	Քանաքեռ-Զեյթուն	4095	2572	-37.19%
	Մաշտոց	2250	2840	26.22%
	Շահումյան	3524	3322	-5.73%
	Պոմպեր	1070	1848	72.71%
	Մարզեր	5813	7262	24.93%
	այդ թվում կոյուղու վթար	113	92	-18.58%
	այդ թվում դիտահորի խցանում	4086	3781	-7.46%
		Ընդամենը	43705	48239

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ




Շարունակաբար ներկայացնել ՎեոլիաԹիմի գործունեությունը, այդ թվում նրա տարբեր ծառայությունների աշխատանքն ու դրա առանձնահատկությունները, գտնել ու հանրությանը տեղեկացնել այն ամենի մասին, ինչը նպաստում է ընկերության գործարար համբավի բարձրացմանը և ցույց տալիս համակարգի դինամիկ զարգացումն ու առաջընթացը. սա էր Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ հիմնական գործառնությունը հուլիս ամսին:




Իսկ տեղեկատվության հոսքը զգալի էր հաշվետու ժամանակամիջոցում: Մի կողմից ջրի սպառման ծավալների ավելացումը, ինչը հանգեցրել էր համակարգի լարված աշխատանքին, մյուսից շինարարական աշխատանքների ծավալի ավանդական ավելացումը ամռանը թույլ են տվել ՀԿԲ-ին viber հավելվածի Smart Monitoring էջից լայն ընտրություն կատարել: Գործին նպաստել է նաև սերտ համագործակցությունը ընկերության տարբեր ստորաբաժանույնների հետ: Արդյունքում, Veolia Armenia ֆեյսբուքյան էջի 51 հազար ընթերցող հնարավորություն է ունեցել հետևել Վեոլիայի աշխատանքին ամենօրյա ռեժիմով, մոտ 60 հրապարակումների շնորհիվ պատկերացում կազմել հուլիսին մեր ձեռքբերումների մասին:

Ավելին, հրապարակումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀԿԲ-ն ոչ միայն ապահովել է դրանց լայն թեմատիկան, այլև մատուցման ձևերի և միջոցների բազմազանությունը ու աշխատանքների ընդարձակ աշխարհագրությունը, որպես ամբողջ Հայաստանում գործող ընկերություն: Լուսանկարներ, լուսանկարաշարեր, տեսանյութեր, ինֆոգրաֆիկա. արվել է հնարավորինս ամեն առանձին թեմա հանրությանը ներկայացնելու լավագույն ձևը գտնելու համար:

Օրինակ, Երևանի Թբիլիսյան խճուղի-Քանաքեռ ճանապարհային հանգույցում «Արգական-Քանաքեռ» խոշոր ջրատարի վթարը նախ որքան արագ նույնքան և մանրամասն ներկայացվել է հանրությանը տեսանյութի միջոցով, իսկ աշխատանքների ավարտի մասին տեղեկացվել է հակիրճ՝ առանձին լուսանկարով: Նույնպես տեսանյութով, իսկ հետագայում լուսանկարով անդրադարձ է կատարվել «Արգևի 2 - Երևան» մայրուղային ջրատարի հերթական վթարին ու դրա հետևանքների վերացմանը, որի պատճառով ջրանջատվել էր Արաբկիրն ու մի շարք այլ տարածքներ:



Ընդհանրապես ՀԿԲ-ն այս ընթացքում փորձել է հնարավորինս հետևողական լինել ներկայացվող խնդիրների լուծման գործում: Եթե ասվել է որևէ ծրագրի մեկնարկի մասին, ապա որոշ ժամանակ անց անդրադարձ է կատարվել թեմային, ներկայացնելով աշխատանքների ընթացքը կամ ավարտը: Դրա վկայությունը Մեդրիի տարածաշրջանի ջրամատակարարման խնդիրների շարունակական լուսաբանումն է: Այս անգամ ընթերցողին ներկայացվել է «Մեդրի» շահագործման տեղամասի մասնագետների կողմից «Ագարակ» ՕԿՁ-ի մաքրելն ու ախտահանելը, որտեղից ջուր է ստանում ամբողջ քաղաքը շուրջ 1500 բաժանորդ:



Հետևողականության հաջորդ օրինակը համակարգի համալրումն է շինտեխնիկայով ու սրանսպորտային միջոցներով: Դրա հերթական համալրումը հուլիսին էր, երբ ստացվեց 4 միավոր «New Holland» մակնիշի էքսկավատոր կցամասերով և 4 միավոր ռուսական «UAZ Profy» ծածկախցիկներով,

որտեղ տեղադրված էր հոլանդական «Rioned» ընկերության արտադրության կոյուղու մաքրման փոքրածավալ համալիրներ: Բնականաբար, տվյալ փաստը նաև առիթ հանդիսացավ ևս մեկ անգամ հանրությանը ներկայացնելու համակարգի տեխնիկական վերազինումն ու նոր տեխնոլոգիաների կիրառումը հոգուտ սպառողի:

Ընդ որում, ներկայացնելով տեխնիկական նորամուծությունները, ՀԿԲ-ն հրապարակումներում հնարավորինս փորձ է արել տեղեկատվականից բացի ներդնել նաև կրթական տարր, ոչ միայն ցույց տալու համար, այլև սպառողին սովորեցնելու նպատակով, թե համակարգի կառավարման գործում ինչպիսի գործիքակազմ է կիրառվում, որոնք են առկա տեխնիկական խնդիրներն ու ինչ միջոցներ են ձեռնարկվում դրանց լուծման ուղղությամբ:

Այսպես, իրազեկվել է, որ Երևանում ջրամատակարարման կայուն ճնշման վերահսկողությունն ապահովվում է թվով 65 «Լոգեր» կոչվող սարքերի միջոցով,

որոնք 24/7 ռեժիմով գրանցում են ջրի ճնշումը 65 գոտիների բաժանված մայրաքաղաքի ամբողջ բաշխիչ ցանցում: Իսկ Երևանի Գ.Նժդեհի փողոցում ջրագծի թաքնված վթարի հայտնաբերումը առիթ է հանդիսացել ներկայացնելու Մեծ Բրիտանիայից ստացված եզակի սարքը՝ «Շարժական լաբորատորիան»:

Տվյալ օրինակով նկարագրվել է հանրությանը, թե ինչպես է լուսարձակով ու տեսախցիկով հագեցած մալուխը դիտահորից խողովակի միջով առաջ շարժվում և մինչև 120 մետր հեռավորության վրա հայտնաբերում վթարը, ուսումնասիրում խողովակի տեխնիկական վիճակը, տեսաձայնագրում, իսկ տվյալները փոխանցում համակարգչին: Երրորդ կարևոր թեման հոսքաչափի կիրառումն էր՝ Նոր Նորքի 8-րդ զանգվածի 38 շենքի օրինակով, ինչը թույլ տվեք մուտքագծին «գաղտնի» վթար հայտնաբերել վայրկյանում 5 լիտր հոսակորստով: Ընթերցողը տեղեկացվեց, որ համակարգում տեղադրված է նաև 992 հոսքաչափ, որից 216-ը Երևանում, 776-ը մարզերում, որոնք 24-ժամյա ռեժիմով գրանցում են հոսող ջրի քանակն ու «Լոկատոր» հեռատեղեկատվական ծրագրով տվյալները փոխանցում Վեոլիա Ջուր ընկերության Կարգավարական ծառայությանը՝ անհրաժեշտության դեպքում տարածքային շահագործման ծառայությունների միջոցով իրավիճակին միջամտելու ու միջոցներ ձեռք առնելու համար:

Ընդ որում բոլոր նշված թեմաները առաջարկվել են ՀԿԲ-ի կողմից և ներկայացվել հանրության ընկերության համապատասխան ծառայությունների օգնությամբ:

Հուլիսին լուսաբանվել է նաև ջրամատակարարման բարելավվումը Ծաղկաձորում, Թեղենիսում, Նորաբացում, Քաղսիում, Բջնիսում, ջրաքանակի ավելացումը «Ալափարս» աղբյուրում, նոր ջրագծի կառուցումը Ջերմուկում, ինչպես նաև Էջմիածնի Զվարթնոց ու Արագած թաղամասերի ու հարակից Մուսավեռ, Ոսկեհատ, Պտղունք, Արևաշատ գյուղերի համար, «կորած» դիտահորերի հայտնաբերումը Գյումրիում, բաշխիչ ցանցի վերակառուցումը Թավշուտ գյուղում, Երևանի Դավիթ Բեկ և հարակից փողոցների, ինչպես նաև Էրեբունու Մուշակյան թաղամասի ջրամատակարարման կարգավորումը և այլ աշխատանքներ:

Նաև ՀՀ Սահմանադրության օրն է նշվել հուլիսին, ինչպես նաև ներկայացվել է ՀՀ ՊԵԿ-ի հայտարարությունն այն մասին, որ 2022 թ. 2-րդ եռամսյակի տվյալներով Վեոլիան հանդիսացել է հանրապետության թիվ 38 խոշոր հարկատուն:

Հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, facebook.com/veolia.armenia-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և youtube Veolia Jur էջերում

VEOLIA

77 պետություն է վճարվել
3.993.801.000 77 դրամ
հարկեր ու վճարներ

#ՎԵՈԼԻԱՆԹԵՐՈՎ

The graphic features the Veolia logo at the top left. The central text is in blue and red, providing contact information. To the right, there is an illustration of a classical building with a person standing in front of it, surrounded by various icons representing different services and infrastructure. At the bottom, there is a hashtag #ՎԵՈԼԻԱՆԹԵՐՈՎ.

*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով Ընկերության Առևտրային տնօրինության մասնագետ-տեսուչների աշխատանքային պարտականությունների անվտանգ կազմակերպման և իրականացման մակարդակը բարձրացնելու անհրաժեշտությունը, ղեկավարվելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02Լ հրամանի պահանջներով, Վեոլիա Գրուպի «Երթևեկությունն աշխատավայրում» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջներով, Ընկերության գլխավոր տնօրենի 2022 թվականի հուլիսի 13-ի թիվ 3733 Ա հրամանի հիման վրա՝ Ընկերության Առևտրային տնօրինության թվով 83 Մասնագետ-տեսուչների համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 3 մոդուլից բաղկացած առկա դասընթացները.

- ▶ «Ավտոմեքենաների անվտանգ շահագործում» թեմայով առկա դասընթաց,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունն աշխատավայրում» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները թեմայով առկա դասընթաց,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» թեմայով առկա դասընթաց:




● ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02 Լ հրամանի պահանջները, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ հոդվածի 3-րդ մասի և 254-րդ հոդվածի, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ հաստատված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջներով և ելնելով Վեոլիա Գրուպի «Վտանգավոր նյութերի, քիմիկատների տեղափոխում, պահեստավորում գործածում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջներից, Ընկերության գլխավոր տնօրենի 2022 թվականի հուլիսի 25-ի թիվ 4045 Ա հրամանի հիման վրա՝ Ընկերության քլորակայանների ինժեներատեխնիկական անձնակազմի՝ քլորի օպերատորների և քլոր տեղափոխող մեքենայի վարորդի թվով 6 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց 3 մոդուլից բաղկացած ստորև ներկայացվող մասնագիտական որակավորման հեռավար/առցանց դասընթացներ/գիտելիքների ստուգում.

- ▶ «Քլորակայանի օպերատորի և քլոր տեղափոխող մեքենայի վարորդի» որակավորման հեռավար/առցանց դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ▶ Վեոլիա Գրուպի «Վտանգավոր նյութերի, քիմիկատների տեղափոխում, պահեստավորում գործածում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջները հեռավար/առցանց դասընթաց:
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» հեռավար/առցանց դասընթաց:



2021-2022թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ




5.2. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 15 քլորակայանում, 10 պոմպակայանում, 1 ՕԿՁ-ում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 18 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:

2022 թ. իրականացված անվտանգության ստուգայցերի քանակներն ըստ օբյեկտների



5.3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԱԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ, ՏԻՄ-ԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ:

● Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի համապատասխան որոշմամբ հաստատված ՀՀ Շիրակի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլանի պահանջների սույն թվականի հուլիսի 15-ին «Հյուսիս» շահագործման տնօրինության «Շիրակ» շահագործման տեղամասը ՈԱԱ Բաժնի համակարգմամբ, մասնակցեց «Շիրակի մարզի Գյումրի-Շիրակ ավտոճանապարհի հատվածում «Մարալիկ» D-600մմ տրամագծով ջրատարի վթարի դեպքում վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով Հատուկ տակտիկական ուսումնավարժությանը: ՀՏՈՒ-ների նպատակն է կատարելագործել իժեներատեխնիկական անձնակազմի հմտությունները նմանատիպ իրավիճակներում արագ արձագանքման և վթարավերականգնողական աշխատանքների իրականացման նպատակով: Ուսումնավարժությանը ԱԻՆ նախարարության և ՀՏՈՒ-ի ղեկավար կազմի կողմից գնահատվեց դրական:

5.4. ՔԼՈՐԻ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՆՇԱՓՈՐՁԱՐԿՄԱՆ, ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԵՎ ՆԵՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Հաշվետու ամսում Բաժինը՝ Տեխնիկական տնօրինության ՔևԽԶՄԿ Ծառայության հետ համատեղ Հայաստանի Հանրապետությունում գործող հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում կազմակերպեց և իրականացրեց Ընկերության թվով 25 քլորի բալոնի ճնշափորձարկման, վկայագրման և ներկման աշխատանքները:

5.5. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

● Հաշվետու ամսում Բաժինը՝ Ընկերության Առևտրային տնօրինության Մասնագետ-տեսուչների աշխատանքային պարտականությունների անվտանգ կատարման նպատակով կազմակերպեց և իրականացրեց թվով 447 ճանապարհային անվտանգության լուսաանդրադարձնող ժիլետի գնման և բաշխման գործընթացը:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



6.1. Համակարգչային ցանց

Հուլիս ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Կատարվել են համակարգիչների վերաբաշխման աշխատանքներ՝ անմխիթար վիճակում գտնվող համարգիչների պահուստավորվում և գույքագրվում են Ջրային Կոմիտե հանձնելու համար:
- Տրամադրվել են նոր համակարգիչներ և հին համակարգիչները նույնպես վերաբաշխվել են:
- Կատարվել են մոնիտորինգային աշխատանքներ՝ անվտանգության տեսահսկման համակարգերի ուղղությամբ:
- Մի շարք աշխատանքներ են իրականացվել՝ անսարք սարքավորումները փոխարինելու նոր սարքավորումներով, ինչպես նաև տեղադրվել են նորերը:
- Իրականացվել են Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Իրականացվել են Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Սպասարկվել է մոտավորապես 450-500 զանգ SS բաժնի աջակցության համարով:
- Գրանցվել, սպասարկվել և փակվել է մոտ 600 SS աջակցության տոմս:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Հուլիս ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Մի շարք հաշվետվություններ են պատրաստվել և տրամադրվել ՀՕԿՀ և Ջրային Կոմիտե, ինչպես նաև տարբեր ներքին և արտաքին աուդիտորներին:

- Ինտերակտիվ համակարգում կատարվել են փոփոխություններ, կապված ՀՕԿՀ ծանուցումների ժամկետների պահպանման ուղղությամբ

- Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	74	92.3	17.9
Էրեբունի	60	23.5	4.6
Շենգավիթ	34	7.2	1.3
Կենտրոն	93	46.7	9.3
Արաբկիր	39	14.3	2.9
Մաշտոց	115	78.9	14.7
Շահումյան	91	43.4	7.8
Եղվաղո	22	6.6	1.2
Քանաքեռ-Զեյթուն	51	18.3	3.3
ԼՂԿԲ	180	112.0	20.2
Լոռի	94	65.8	11.7
Շիրակ	129	42.4	7.8
Արթիկ	23	8.6	1.6
Արարատ	83	12.7	2.3
Աբովյան	159	84.3	14.8
Հրազդան	32	9.4	1.8
Ալավերդի	15	3.5	0.6
Արտաշատ	81	15.6	2.7
Բերդ	2	0.5	0.1
Գավառ	30	11.2	2.0
Գորիս	26	8.6	1.6
Դիլիջան	1	0.2	0.0
Էջմիածին	62	34.8	6.2
Թալին	2	0.6	0.1
Իջևան	21	1.6	0.3
Կապան	11	4.4	0.8
Ճամբարակ	1	0.1	0.0
Մասիս	13	5.5	1.0
Մեղրի	2	0.8	0.1
Նոյեմբերյան	4	1.8	0.3
Արմավիր	29	16.4	3.1
Զեյթուն	5	1.3	0.3
Սևան	3	1.1	0.2
Վայք	2	0.5	0.1
Վարդենիս	2	0.5	0.1
Աշտարակ	15	5.4	0.9
Զարենցավան	31	13.1	2.3
Սիսիան	18	16.3	3.0
Սպիտակ	45	8.6	1.6
Ստեփանավան	25	11.6	2.1
Տաշիր	1	0.3	0.1
Ընդամենը	1726	830.4	152.7

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)
 Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում են ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում են հուլիս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Յլուսիս	19	7.26	69	3.89
Էրեբունի	44	31.29	65	2.59
Շենգավիթ	21	6.95	79	1.94
Կենտրոն	29	12.25	64	3.64
Արաբկիր	17	12.21	44	0.73
Մաշտոց	69	54.16	110	1.01
Շահումյան	40	36.82	74	0.84
Եղվարդ	9	5.54	15	0.51
Քանաքեռ-Զեյթուն	10	4.25	57	0.67
Լոռի	44	29.11	92	0.91
Շիրակ	50	16.20	89	0.53
Արթիկ	21	30.36	85	0.62
Արարատ	6	1.41	15	0.16
Աբովյան	46	34.22	129	1.33
Յրազոյան	52	19.28	50	0.22
Ալավերդի	13	2.34	61	3.30
Աշոցք	4	2.06	20	0.12
Ապարան	1	0.21	7	0.02
Արտաշատ	6	1.17	22	0.58
Գավառ	18	6.24	77	0.74
Գորիս	18	8.18	35	9.66
Դիլիջան	5	2.94	18	0.12
Եղեգնաձոր	4	4.95	19	0.15
Էջմիածին	15	9.43	78	0.98
Թալին	1	0.30	2	0.02
Իջևան	3	0.59	12	0.06
Կապան	5	1.80	18	0.24
Ճամբարակ	2	0.26	29	0.13
Մասիս	63	32.21	79	0.71
Մարտունի	1	0.17	10	0.07
Մեղրի	0	-	4	0.59
Նոյեմբերյան	3	1.29	11	0.09
Արմավիր	13	5.95	8	6.35
Զերմուկ	6	1.55	6	0.02
Սևան	7	3.24	20	0.17
Կայք	0	-	8	0.01
Աշտարակ	8	15.68	28	0.36
Զարենցավան	11	3.95	18	0.11
Սիսիան	3	5.47	19	0.30
Սպիտակ	3	0.21	28	0.13
Ստեփանավան	35	21.64	23	0.12
Տաշիր	2	1.03	14	0.12
Ընդամենը	727	434.19	1711	44.86



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադունցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am